

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«13» դեկտեմբեր 2017թ. թիվ 18

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ  
ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 24-րդ հոդվածի 7-րդ մասի 6-րդ կետը և հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի 04.12.2017թ. հոգաբարձուների խորհրդի նիստի թիվ 4 արձանագրությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.***

1. Հաստատել Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, սպասարկման և մարման կարգը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Զինծառայողների կյանքին կամ առողջությանը  
պատճառված վնասների հատուցման  
հիմնադրամի հոգաբարձուների  
խորհրդի նախագահ՝**

**Վիգեն Սարգսյան**

Հավելված

Հաստատված է  
Ձինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի  
2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 18 որոշմամբ

## Կ Ա Ր Գ

### ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ

#### ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Լայնածավալ մարտական գործողությունների ի հայտ գալու պարագայում, երբ մեծաքանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել, և երբ այդ վնասը պետք է հատուցվի Օրենքով սահմանված կարգով, իսկ Հիմնադրամի միջոցները տվյալ պահին բավարար չեն սահմանված ժամկետներում հատուցումներն ապահովելու համար, Հիմնադրամը միջոցներ ներգրավելու նպատակով կարող է թողարկել պարտատոմսեր սույն կարգում սահմանված պայմանների համաձայն:
2. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է ընդունում պարտատոմսեր թողարկելու մասին՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝
  - 1) անհրաժեշտ ֆինանսավորման ծավալն ու ժամկետները,
  - 2) Հիմնադրամում հավաքագրված միջոցները և կանխատեսվող հոսքերը,
  - 3) այլ աղբյուրներից միջոցներ ներգրավելու հնարավորությունները,
  - 4) շուկայական իրադրությունը, տոկոսադրույքների մակարդակը,
  - 5) այլ էական հանգամանքներ:
3. Յուրաքանչյուր տեղաբաշխման համար պարտատոմսերի տեղաբաշխման վերջնական պայմանները, ներառյալ տեղաբաշխման կարգն ու տեղաբաշխման սկզբի և ավարտի ժամկետները, տարեկան եկամտաբերությունը, տեղաբաշխման ծավալը, պարտատոմսերի շրջանառության ժամկետները որոշվում են հոգաբարձուների խորհրդի կողմից՝ հիմք ընդունելով Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի առաջարկը:

4. Պարտատոմսերը կարող են առաջարկվել նախապես հայտնի անձանց կամ տեղաբաշխվել հրապարակային առաջարկի միջոցով:
5. Հիմնադրամն իր կողմից թողարկված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը վարումը հանձնում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ին:
6. Թողարկման ծավալները և ժամկետայնությունը պետք է պայմանավորված լինեն Հիմնադրամի պարտավորությունների կառուցվածքով և չխաթարեն Հիմնադրամի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը:
7. Պարտատոմսերի անվանական արժեքը և արժեկտրոնը արտահայտվում են ՀՀ դրամով:
8. Արժեկտրոնները վճարվում են կիսամյակային պարբերականությամբ:
9. Պարտատոմսերը թողարկվում են ոչ փաստաթղթային ձևով:

## **ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ**

10. Հիմնադրամը թողարկված պարտատոմսերի կենտրոնացված ռեեստրավարումն ու պահառությունը ՀԿԴ-ին հանձնելու համար ՀԿԴ-ի հետ կնքում է պայմանագիր՝ հաշվի օպերատորի միջոցով: Որպես հաշվի օպերատոր հանդես է գալիս ՀՀ կենտրոնական բանկը:
11. Կարգավորվող շուկայից դուրս պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում տեղաբաշխման ընթացքում (տեղաբաշխման օրը) ներդրողները ներկայացնում են պարտատոմսերի գնման հայտերը և կատարում են վճարումը: Տեղաբաշխման ավարտից հետո Կենտրոնական բանկը, որպես հաշվի օպերատոր, ՀԿԴ-ի ծրագրային համակարգ է մուտքագրում պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարականները, որի արդյունքում տեղաբաշխված պարտատոմսերը թողարկողի հաշվից փոխանցվում են համապատասխան ներդրողների արժեթղթերի հաշիվներին:
12. Կարգավորվող շուկայից դուրս պարտատոմսերի տեղաբաշխումը կարող է իրականացնել Հիմնադրամն ինքնուրույն կամ այդ նպատակով ներգրավել տեղաբաշխող(ներ)ի:
13. Կարգավորվող շուկայում պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում Հիմնադրամի տնօրենը ընտրում է տեղաբաշխող կազմակերպություն (բանկ կամ ներդրումային ընկերություն), որի հետ կնքում է տեղաբաշխման պայմանագիր:

14. Կարգավորվող շուկայում պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդի նախորդ օրը Կենտրոնական բանկը, որպես հաշվի օպերատոր, պարտատոմսերը մուտքագրում է Հիմնադրամի տեղաբաշխման հաշվին, և տեղաբաշխողին տալիս է հասանելիություն այդ հաշվին՝ պարտատոմսերը աճուրդի համար դեպոնացնելու նպատակով (այս գործողություններն իրականացվում են էլեկտրոնային եղանակով, ՀԿԴ-ի ծրագրային համակարգի միջոցով): Կարգավորվող շուկայում տեղաբաշխման աճուրդի արդյունքներով վերջնահաշվարկը և փոխանցումներն արվում են ավտոմատ կերպով ՀԿԴ-ի կողմից:
15. Տեղաբաշխման ժամանակ պարտատոմսերի դիմաց ներդրողների կողմից վճարումները կատարվում են ՀՀ դրամով, անկանխիկ ձևով:
16. Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է ունենալ արժեթղթերի հաշիվ, որի բացման և սպասարկման ծախսերն իրականացնում է ինքը՝ հաշվետերը:

### **ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ**

17. Պարտատոմսերի գծով վճարումները կատարվում են վճարային գործակալի միջոցով: Վճարային գործակալ հանդես է գալիս Կենտրոնական բանկը կամ ՀԿԴ-ն՝ Հիմնադրամի և ՀԿԴ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա:
18. ՀԿԴ-ի՝ վճարային գործակալ հանդես գալու դեպքում, Հիմնադրամը պարտատոմսերի գծով վճարման ենթակա գումարը իր՝ Կենտրոնական բանկում գտնվող հաշվից փոխանցում է ՀԿԴ-ի՝ Կենտրոնական բանկում գտնվող հաշվին:
19. Կենտրոնական բանկը, որպես Հիմնադրամի հաշվի օպերատոր, Հիմնադրամի ցուցումով ՀԿԴ-ին տալիս է վճարման հանձնարարական (էլեկտրոնային եղանակով, ՀԿԴ-ի ծրագրային համակարգի միջոցով), որի հիման վրա ՀԿԴ-ն անմիջապես գումարները փոխանցում է համապատասխան սեփականատերերին (անվանատերերին)՝ հիմք ընդունելով ռեեստրի տվյալները:
20. Կենտրոնական բանկի՝ վճարային գործակալ հանդես գալու դեպքում սույն կարգի 20-րդ կետով ՀԿԴ-ի համար նախատեսված գործողություններն իրականացնում է Կենտրոնական բանկը՝ ՀԿԴ-ից ստացված ռեեստրի տվյալների հիման վրա:
21. Արժեկտրոնները վճարվում են պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ

պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված սեփականատերերին (անվանատերերին):

22. Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին (անվանատերերին) վճարվում (մարվում) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
23. Պարտատոմսերի անվանական արժեքի մարման գումարները վճարվում են դրանց մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարը վճարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
24. Պարտատոմսերի անվանական արժեքը վճարվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ավարտի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված սեփականատերերին (անվանատերերին):
25. Պարտատոմսերի անվանական արժեքի և արժեկտրոնների մարման գումարները վճարվում են անկանխիկ ձևով, պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) բանկային հաշիվներին փոխանցման միջոցով: